ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

| | | | |
|---|---|---|---|
| *Համարը* | ՀՕ-371-Ն | *Տեսակը* | Հիմնական |
| *Տիպը* | Օրենք | *Կարգավիճակը* | Գործում է |
| *Սկզբնաղբյուրը* | Միասնական կայք 07.13.20-07.26.20 Պաշտոնական հրապարակման օրը 20.07.2020 | *Ընդունման վայրը* | Երևան |
| *Ընդունող մարմինը* | ՀՀ Ազգային ժողով | *Ընդունման ամսաթիվը* | 09.07.2020 |
| *Ստորագրող մարմինը* | ՀՀ Նախագահ | *Ստորագրման ամսաթիվը* | 17.07.2020 |
| *Վավերացնող մարմինը* | | *Վավերացման ամսաթիվը* | |
| *Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* | 21.07.2020 | *Ուժը կորցնելու ամսաթիվը* | |

**Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

# ՀՀ ՕՐԵՆՔԸ «ԳԵՈԴԵԶԻԱՅԻ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

**Ընդունված է 2020 թվականի հուլիսի 9-ին**

## «ԳԵՈԴԵԶԻԱՅԻ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» 2001 թվականի մայիսի 2-ի ՀՕ-179 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի «ե» կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 2.** Օրենքի 5-րդ հոդվածում՝
1) առաջին պարբերությունից հանել «Անշարժ գույքի» բառերը։
2) «դ» կետն ուժը կորցրած ճանաչել։
3) «թ» կետից հանել «և դրանց պահպանմանն ուղղված միջոցառումների վերահսկողությունը» բառերը:

**Հոդված 3.** Օրենքի 13-րդ հոդվածում՝
1) 1-ին մասի «կոմիտեն՝ գեոդեզիական պետական տեսչության միջոցով» բառերը փոխարինել «գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը (այսուհետ՝ տեսչական մարմին)» բառերով.
2) 2-րդ մասի «է» կետից հանել «, բացառությամբ անշարժ գույքի միավորի սահմաններում կադաստրային քարտեզագրական աշխատանքների» բառերը.
3) 3-րդ մասում՝
ա։ «Գեոդեզիական պետական տեսչությունն» բառերը փոխարինել «Տեսչական մարմինն» բառերով,
բ։ «բ» կետն ուժը կորցրած ճանաչել,
գ։լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» և «դ» կետերով.
«գ) դադարեցնելու պետական նշանակության գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների կատարումը, եթե դրանք իրականացվում են առանց համապատասխան թույլտվության կամ նորմատիվային փաստաթղթերի պահանջների խախտմամբ, կազմել համապատասխան ակտեր, ներկայացնել առաջարկություն տեղագրական քարտեզագրման և հողաշինարարական աշխատանքների իրականացման որակավորված գործունեության դադարեցման կամ կասեցման վերաբերյալ.
դ) գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքներով զբաղվող պետական կազմակերպություններին, որակավորված ֆիզիկական և իրավաբանական անձանց տալու աշխատանքների կատարման կարգի և կիրառվող տեխնոլոգիայի, ինչպես նաև այդ աշխատանքների արդյունքում ստացված տվյալների ու նյութերի հավաքման, հաշվառման, պահպանման, բազմացման և օգտագործման, թերությունների վերացման վերաբերյալ անհրաժեշտ ցուցումներ:».
4) 4-րդ մասի «սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը փոխարինել «սահմանվում է օրենքով» բառերով:

**Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հանրապետության նախագահ**

**Ա. Սարգսյան**

2020 թ. հուլիսի 17
Երևան
ՀՕ-371-Ն

**Պաշտոնական հրապարակման օրը՝ 20 հուլիսի 2020 թվական:**